

**2016/2017թթ. ընդունելության մրցույթի հայտարարություն
Արդյունավետ կառավարման Կարլ Ֆրիդրիխ Գյորդելեր քոլեջ.
Ռոբերտ Բոշ հիմնադրամի եւ Արտաքին քաղաքականության
գերմանական ընկերակցության համագործակցությամբ
կատարելագործման ծրագիր**

Բեռլին, դեկտեմբեր, 2015թ.

Հարգարժան տիկնայք եւ պարոնայք,

Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել Արդյունավետ կառավարման Կարլ Ֆրիդրիխ Գյորդելեր քոլեջին: Քոլեջն արդյունավետ կառավարման բնագավառում որակավորում է ապագա ղեկավար ուժերի Ադրբեջանից, Բելառուսից, Թուրքիայից, Հայաստանից, Մոլդովայից, Ռուսաստանից, Վրաստանից եւ Ուկրաինայից՝ այդպիսով ցանկանալով հզորացնել պատասխանատու գործելակերպը հանրային ոլորտում (կառավարչություն, հանրօգուտ կազմակերպություններ) եւ տնտեսությունում:

Ես մի քանի տարի ի վեր ուղեկցում եմ այս ծրագրին որպես քոլեջի տնօրեն եւ այս գրությամբ խնդրում եմ Ձեզ աջակցել մեր արդի ընդունելության մրցույթի հայտարարությանը: Փոխանցեք խնդրեմ ծրագրի վերաբերյալ տեղեկությունները Ձեր ծանոթների շրջանակին եւ քաջալերեք բանիմաց աշխատակիցներին մասնակցելու մրցույթին:

Քոլեջն ուղղված է հանրային կառավարչությունում, տնտեսական ձեռնարկատիրությունում կամ հանրօգուտ կազմակերպություններում երկարատեւ մասնագիտական փորձառությամբ ղեկավար ուժերին: Նրանք պետք է ունենան ակնառու ավարտական արդյունքներով բուհական կրթություն, հետաքրքրություն արդյունավետ կառավարման հանդեպ եւ քաղաքական մտածողություն, ներգրավված լինեն հանրօգուտ աշխատանքներում եւ շատ լավ գերմաներեն խոսեն:

Քուլեջի մեր ընտրած մասնակիցները.

- հաստատում են արժեքավոր կապեր հասարակության, քաղաքականության եւ հանրային կառավարչության բարձրակարգ փորձագետների հետ Գերմանիայից եւ Եվրամիությունից,
- կատարելագործվում են կառավարչության արդիականացման եւ արդյունավետ կառավարման թեմաներով, ձեռք են բերում գերմանական մի համալսարանի համապատասխան հավաստագիր,
- զարգացնում են ղեկավարման իրենց հմտություններն ու գիտելիքները նախագծերի կառավարման (պրոյեկտմենեջմենթի) գործում,
- ներսից ծանոթանում են գերմանական հաստատություններին, որոնք գործում են իրենց աշխատավայրին համանման ոլորտներում,
- դառնում են Եվրոպայում երիտասարդ ղեկավար ուժերի միջազգային կապերի ցանցի մաս:
- Դրանից բացի, մասնակիցները քուլեջի շրջանակում իրականացնում են կառավարման սեփական նախագիծ իրենց հայրենիքում:

Գործատուների համար իրենց աշխատակիցների՝ քուլեջին մասնակցության դեպքում ծախսեր չեն առաջանում: Ուղեւորության, այցազրի եւ կացարանի ծախսերը, նաեւ սննդի ծախսերի զգալի մասը եւ սեմինարի բոլոր այլ ծախսերը հոգում է Ռոբերտ Բոշ հիմնադրամը:

Դուք որպես վերադաս՝ Ձեր աշխատակիցներին կարող եք մասնակցության հայտ ներկայացնելու գործում հեշտությամբ աջակցել՝ նրանց տալով երաշխավորագիր (երաշխավորագրի վերաբերյալ մանրամասն ցուցումներ դիմորդները կստանան ծրագրի ինտերնետային էջում): Ձեր աշխատակիցների քուլեջ ընդունվելու դեպքում խնդրում ենք Ձեզ նրանց հնարավորություն ընձեռել տարվա ընթացքում մասնակցելու քուլեջի բոլոր միջոցառումներին: Դրանք են՝ երեքշաբաթյա սեմինար Գերմանիայում (2016թ. օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 16-ը) հնգօրյա միջանկյալ սեմինար 2017թ.



մարտին եւ եռօրյա եզրափակիչ հանդիպում Բեռլինում 2017թ. օգոստոս-սեպտեմբերին:

Քոլեջի մասին մանրամասն տեղեկություններ գերմաներենով կարող եք ստանալ կից ուղարկված բուկլետում եւ www.goerdeler-kolleg.de կայքում:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 22. փետրվարի, 2016թ.:

Հարցերի դեպքում դիմեք խնդրեմ քոլեջի ղեկավար Լեա Մոֆի Դեվորեթցկուն Արտաքին քաղաքականության գերմանական ընկերակցությունում:

Հեռախոսային հարցումները (գերմաներեն եւ անգլերեն). 0049 30 25 42 31 47

Գրավոր հարցումները (գերմաներեն, անգլերեն եւ ռուսերեն). [goerdeler-kolleg\[at\]dgap.org](mailto:goerdeler-kolleg[at]dgap.org).

Խորին շնորհակալություն Ձեր աջակցության համար:

Բարեկամական ողջույններով՝

A handwritten signature in blue ink, which appears to read 'Ulrike Grottel'.

Պրոֆ. Գյունթեր Ֆերհոյզեն

Քոլեջի տնօրեն

Եվրոպական հանձնաժողովի պաշտոնաթող փոխնախագահ